



ԵՐԱՊԵՏԱՔԹԻ, 25 ՅՈՒՆԻԱՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 1

ԱՐԳԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Երանի անոր, որ ամբարիշտ մարդոց խորհուրդին չի հետեւիր,
մեղաւորներու ապրելակերպը չ'ընդօրինակեր,
եւ գԱստուած ծաղրողներուն հետ ընկերութիւն չ'ըներ.
այլ՝ հանոյ՛ կ'առնէ Տիրոջ Օրէնքէն,
եւ անոր Օրէնքը կը սերտէ գիշեր ու ցերեկ:
Անիկա կը նմանի հոսող ջուրերու կողմին տնկուած ծառին,
որ նիշդ ժամանակին իր պտուղը կու տայ,
եւ որուն տերեւները չեն չորնար բնաւ.
անոր բոլոր գործերը յաջողութեամբ կը պսակուին:
Բնաւ այսպէս չեն ամբարիշտները.
այլ՝ կը նմանին յարդին, որ հովը կը ցրուէ:
Ատոր համար ալ ամբարիշտները
Աստուծոյ դատաստանէն պիտի չազատին.
մեղաւորները արդարներու կարգին պիտի չդասուին.
որովհետեւ Տէրը կը նանչնայ արդարներուն նամբան,
մինչ ամբարիշտներու նամբան գիրենք կորուստի պիտի տանի:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 5:1-13)



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ (5:1-13)

Ընդհանրապես համայնքային, եկեղեցիներու լուրերը Պողոս Առաքեալին կը հասնէին երկու ձեւերով, գրաւոր՝ «Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք», կամ բերանացի՝ «Լսեցի ձեր մէջ տեղի ունեցած»։ Ահա այս հարուածին մէջ, Պողոս Առաքեալի կը սկսի արծարծել քանի մը հարցեր, որոնց տեղեկացած էր բերանացի զեկոյցով։ Հարց մը որ բարոյական բնոյթ ունի։ Հարց մը որ նոյնիսկ «հեթանոսներուն մօտ դափապարտուած է», այսինքն՝ այսպիսի բան լսուած չէ, ընդունելի չէ եւ դափապարտելի։

«Մարդուն մէկը իր հօրը կնոջ հետ կը կենակցի։ Եւ դեռ դուք կը հպարտանա՞ք, պէտք չէ՞ր, ընդհակառակը, սգայիք, եւ ձեր մէջէն դուրս դնէ՞ք այդ անբարոյութիւնը գործողը» (2 հմր)։ Այստեղ կը ներկայացուի արենապղծութեան պարագան։ Նախ Առաքեալը կ'անդրադառնայ այն երեւոյթին, որ ընդհանրապես փարածուած երեւոյթ էր Կորնթոսի, եւ այս պարագային Կորնթոսի եկեղեցոյ մէջ, անբարոյութեան պարագան։ Այդ մասին Պողոս Առաքեալ նախապէս անդրադարձած էր մեզի անձանօթ նամակին մէջ։ Բայց այս անգամ մէկ այլ ուրիշ եզակի պարագայ մը, որուն համար ալ ընդվզումով կ'արարայարտուի։

Իսկ անոնք, ընդհակառակը կը հպարտանային։ Կը հպարտանային ոչ թէ այս անբարոյութեան համար, այլ կը հպարտանային անմիտ բաներով, երեւոյթներով, փոխանակ ուշադրութեամբ հետեւելու թէ համայնքէն ներս ինչ կը կատարուի, եւ այդ երեւոյթը բիծ կը բերէ եկեղեցոյ վրայ, եւ երբեք ալ հաշտ չէ Աստուածաշունչին եւ քրիստոնէական սկզբունքներուն։ Ընդհակառակը, պէտք էր որ սգային, ցաւէին եւ մրածէին ու փորձէին սխալը դարմանելու մասին, անմիջապէս դուրս դնելու այդ անձը։

«Թէպէտեւ մարմինով հեռու՝ բայց հոգիով ձեզի հետ եմ, եւ իբրեւ ձեր մէջ ներկայ՝ վճիռս փոխի» (3 հմր)։ Ճիշդ Պողոս Առաքեալ մարմինով հեռու է, բայց հոգիով միշտ իրենց հետ։ Ինքզինք կը հասկնայ ոչ թէ եկեղեցոյ մարմինէն հեռու ու անջատ մէկը, որ իր գործը կատարեց, սերմանեց եւ վերջացուց եւ ալ կապ չունի, այլ՝ ընդհակառակը, իբրեւ անոր անբաժան մասը, իբրեւ հոգեւոր ծնող, իբրեւ ընդհանրիկ անդամ, կ'աղօթէ եւ իբրեւ առաքեալ իրեն փրկուած հեղինակութեամբ իր վճիռն ալ կու փայ։ Հեղինակութիւն մը, որ իրեն փրկուեցաւ Յիսուս Քրիստոսի կողմէ, «ինչ որ կապէք կատարուած ըլլայ, ինչ որ արձակէք արձակուած ըլլայ», այս հեղինակութեամբ, որպէսի Եկեղեցին սուրբ եւ աստուածավայելուց պահելու համար։

«Կ'ուզեմ որ երբ Յիսուս Քրիստոսի անունով իրարու քով հաւաքուիք, եւ ես ալ հոգիով ձեզի հետ ըլլամ, Քրիստոսի փուած իշխանութեամբ, այդ անբարոյութիւնը գործողը իր մարմինով Մատանային կամքին ձգեք, որպէսզի մարմինը կորսուի, եւ այսպիսով թերեւս հոգին փրկուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դափաստանի օրը» (4-5 հմր)։ Այս երեւոյթը կը կոչուի բանադրել։ Իսկ բանադրելուն նպատակը պէտք է ըլլայ մարդուն փրկութիւնը։ Երկրորդ, Մատանային կամքին ձգել կը նշանակէ զայն լքել, Աստուծոյ պաշտպանութենէն զուրկ ձգել, որպէսզի անով կարելի ըլլայ հոգին փրկել։ Հակառակ այն իրողութեան, Մատանան առանց Աստուծոյ կամքին ոչինչ կրնայ ընել։ Աստուծոյ կողմէ անուղղակի թոյլտրութիւն մը։ Օրինակ Յոբի պարագային Աստուծմէ կը ստանայ արտօնութիւնը։ Տակաւին, այս բանադրանքը անոր համար, որպէսզի մարդուն մեղանշական բնութիւնը կորուստի մարմնէ, մարդուն մարմնաւոր խայթ մը փայտ, որպէսզի մարմնական ցաւին եւ մարմինին կորուստին ընդմէջէն հոգին զգաստանայ եւ փրկուի։ Չնայած կրնայ նաեւ չիրականանալ։ Ի վերջոյ, բանադրանքը անհրաժեշտ է Եկեղեցոյ համար, որպէս վիրաբուժական միջոց հեռացնելու ուռուցքը մարմինէն, մնացեալ մասերը առողջ պահելու համար։

«Ճիշդ չէ որ պարծենաք։ "Քիչ մը թթխմորը ամբողջ զանգուածը կը խմորէ"։ Չարութեան հին խմորը դուրս նետեցէք ձեզմէ, որպէսզի ամբողջութեամբ նոր եւ անխմոր զանգուած մը ըլլաք, ինչպէս որ էք արդէն, քանի որ Քրիստոս՝ մեր Զարիկին Գառնուկը մորթուեցաւ։ Ուստի Զարիկը փօնենք՝ ոչ թէ հին խմորով, այսինքն՝ ոչ թէ չարութեան եւ անզգամութեան խմորը պահելով մեր մէջ, այլ՝ առանց թթխմորի, այսինքն՝ անկեղծութեամբ եւ ճշմարտախօսութեամբ» (6-8 հմր)։

Ուրեմն, այս երեւոյթը պարծանքի առարկայ չէ, ընդհակառակը, կը նմանի թախմորի, ինչպէս Քրիստոս եւս իր ուսուցումներուն մէջ կը յիշեցնէր, «զգուշացէ՛ք Փարիսեցիներու խմորէն», որ խորհրդանիշ է մեղքի ու չարիքի: Նոյնպէս Հին Կրակարանին մէջ Զարիկը ուրբելու առանց թախմորի: Այսպէղ եւս Պօղոս Առաքեալ օգրագործելով նոյն օրինակը կը թելադրէ որ իրենցմէ հեռու վանէն այդ չարիքը, այլապէս անպարբեր գրնուելով կրնայ վարակիչ դառնալ ամբողջ եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ կոչումն է որպէս Աստուծոյ նոր ժողովուրդ ամբողջութեամբ նորոգուած ըլլալու, ուր հին մարդը իր հին սովորութիւններով դուրս դրուած պէտք է ըլլայ: Որովհետեւ Քրիստոս ինք մեր Զարկուան գառնուկը մորթուեցաւ որպէսզի մեզ նոր, անխմոր գանգուած պարրասարէ: Ուստի կոչուած է սրբութեան կեանք ապրելու, անկեղծութեամբ:

«Նամակիս մէջ գրած էի, որ անբարոյ մարդոց հետ ջարաբերիք: Խօսքս հեթանոս աշխարհին անբարոյ մարդոց կամ ազահներուն կամ յափշտակողներուն կամ կռապաշտներուն մասին չէր. այլապէս սրիպուած պիտի ըլլայիք այս աշխարհէն հեռանալու» (9-10 հմր): Այս հարուածը ցոյց կու տայ, թէ ասկէ առաջ Պօղոս Առաքեալ դարձեալ արտայայտուած էր բարոյական հարցով, որ կորնթոսի եկեղեցւոյ ամենէն վիրաւոր կողմէ է եղած: Ուստի թելադրած է իր նախկին նամակով, որ այդպիսի մարդոց հետ կապ չունենան:

«Մինչդեռ ըսել կ'ուզէի որ ջարաբերիք անոնց հետ՝ որոնք թելադր քրիստոնէայ կը կոչուին, բայց կամ պոռնկութիւն կ'ընեն կամ կռապաշտ են, կամ ազահ կամ բամբաստող, կամ գինեմոլ եւ կամ յափշտակող: Այնպիսիներուն հետ նոյնիսկ սեղան մի՛ նստիք» (11 հմր): Պօղոս Առաքեալի թելադրութիւնը ներսիններուն մասին է եւ ոչ թէ դուրսիններուն: Այլապէս անհնարին է ապրիլ, պէտք էր որ այս աշխարհէն հեռանային: Ուրեմն Առաքեալի խօսքը շարաւելի անոնց համար է, որ թելադր հաւաքացեալներ են, բայց փակաւին կ'ապրին հեթանոս սովորութիւններով, որոնք անհարիր են քրիստոնէական սկզբունքներուն: Եւ ինչո՞ւ ամիրաժեշտ է այդպիսիներուն հետ կապ չունենալ: Որովհետեւ այդպիսիներուն կենցաղը կը գայթակղեցնէ մարդիկը եւ կը նսեմացնէ եկեղեցւոյ պարկերը անհաւաքներուն դիմաց, որոնք կրնան մեղադրել եկեղեցին այդպիսի երեւոյթներ թոյլատրելուն համար

«Ես ի՞նչ պէտք ունիմ դարբելու անոնք՝ որ եկեղեցիին անդամ չեն. թող Աստուած դարբ գանոնք: Բայց չէ՛ որ եկեղեցիին անդամները դարբելը ձեր գործն է» (12 հմր): Եկեղեցին չ'ըզբաղիր աշխարհայիններով, գանոնք Աստուած է որ պիտի դարբ, բայց Եկեղեցին ունի եւ փրուած է դարբելու իշխանութիւնը այս պարագային իրեննիները: Եկեղեցւոյ կոչուած է ըլլալու սուրբ եւ անարաք, Քրիստոսով շաղուած նոր խմորի գանգուած, որուն մէջ չարութիւն եւ անզգամութիւն պէտք չէ ըլլայ, իսկ եթէ յանկարծ յայտնուի այդպիսի երեւոյթ մը, ահա եկեղեցին պէտք է հոգածու ըլլայ որ այդ երեւոյթը վերնայ, որպէսզի կարելի եղածին չափ Քրիստոսի մարմինը՝ Եկեղեցին ըլլայ «առանց արարի կամ խորշոմի կամ թերութեան, այլ՝ սուրբ եւ անարաք: Երկրորդ, դարբելու, այն իմաստով՝ որպէսզի եկեղեցւոյ թոյլատրու կեցուածքը պարճառ չըլլայ որ մեղաւորը անպարիժ մնալով քաջալերուի իր ընթացքին մէջ եւ գրկուի փրկութենէն, եւ առաւել եւս սխալ օրինակ ծառայելով շարերու կորուստին պարճառ դառնայ: Ուրեմն, Կորնթացիները պէտք է որ ի գործ դնեն Քրիստոսի կողմէ փրուած այդ իշխանութիւնը:

«Ուստի, ”Չարը ձեր մէջէն վերցուցէք”» (13 հմր): Ահա անգամ մը եւս որպէս եզրակացութիւնը Պօղոս Առաքեալ մէջբերելով Բ Օր գիրքէն կ'ըսէ չարը, չարիքը ու անոր այս կամ այն փեսակի ազդեցութիւնը ձեր մէջէն վերցուցէք, հեռացուցէք, որպէսզի եկեղեցին կարենայ նմանիլ Քրիստոսի: